

Հավելված  
Արդարադատության ակադեմիայի  
կառավարման խորհրդի 2017 թվականի  
սեպտեմբերի 29-ի թիվ ԿԽ-005/17/1 որոշման  
(Արդարադատության ակադեմիայի  
կառավարման խորհրդի 2019 թվականի  
մարտի 29-ի թիվ ԿԽ-003/19/1 որոշմամբ կատարված  
փոփոխություններով)

խորհրդի նախագահ՝  Ա. Հարությունյան

**ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**  
**«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ**  
**ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կանոնները (**այսուհետ՝ Կանոններ**) սահմանում են «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (**այսուհետ՝ Ակադեմիա**) աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման կարգը, աշխատաժամանակի ռեժիմը, **Ակադեմիայի** աշխատողի (**այսուհետ՝ Աշխատող**) նկատմամբ կիրառվող խրախուսանքի ու կարգապահական պատասխանատվության միջոցները, **Ակադեմիայի** ունկնդրի (**այսուհետ՝ Ունկնդիր**) վարքագծի կանոնները, ուսումնական դասընթացներից բացակայությունների հաշվարկի կարգը:
2. **Կանոնների** իմաստով՝
  - 1) **Աշխատակազմի ղեկավար՝** աշխատանքային պայմանագրին, պաշտոնի անձնագրի նկարագրին համապատասխան՝ **Ակադեմիայի** գործունեության որոշակի ոլորտներ համակարգող.
  - 2) **Աշխատողի անմիջական ղեկավար՝ Աշխատողի** պաշտոնի անձնագրով կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված անձ, որին անմիջականորեն ենթակա և հաշվետու է **Աշխատողը**.
  - 3) **Աշխատանքի վայր՝ Ակադեմիայի** վարչական շենք, աշխատանքային տարածք, որտեղ **Աշխատողն** իրականացնում է աշխատանքային գործունեություն.
  - 4) **Ունկնդիր՝** Արդարադատության ակադեմիայի մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված, ինչպես նաև **Ակադեմիայի** և այլ կառույցների միջև հուշագրերով, պայմանագրերով կամ համաձայնագրերով նախատեսված ուսումնառություն անցնող անձինք:
3. **Կանոնները** տարածվում են **Աշխատողների** և **Ունկնդիրների**, ինչպես նաև **Ակադեմիայի** տարածքում այլ օրինական հիմքերով ժամանակավորապես գտնվող անձանց վրա:

**II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

4. **Ակադեմիայում** աշխատանքի ընդունումը, այլ պաշտոնի փոխադրումը կամ աշխատանքային հարաբերությունների դադարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան:
5. Աշխատանքի ընդունվելիս **Ակադեմիայի** անձնակազմի և փաստաթղթաշրջանառության բաժինը (**այսուհետ՝ Բաժին**) **Աշխատողին** ծանոթացնում է **Կանոններին** և նրա աշխատանքը կանոնակարգող այլ իրավական ակտերին, ինչի վեաբերյալ նշում է կատարվում աշխատանքային պայմանագրում կամ առանձին փաստաթղթում:
6. Աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում **Բաժինն Աշխատողին** տրամադրում է շրջանցիկ թերթ (հավելված N 1), որն **Աշխատողը** ներկայացնում է դրանում նշված պատասխանատու ստորաբաժանումներ և պատասխանատու անձանց՝ նշագրման, որից հետո կատարվում է վերջնահաշվարկ:

### III. ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ՌԵԺԻՄԸ

7. **Ակադեմիայում** սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ 40 ժամ տևողությամբ՝ ամենօրյա 8-ժամյա աշխատաժամանակով:
8. Հանգստի և սնվելու համար ընդմիջումն սկսվում է ժամը 13<sup>00</sup>-ին և ավարտվում՝ 14<sup>00</sup>-ին (**այսուհետ՝ Ընդմիջման ժամ**), որը, աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով, կարող է փոփոխվել:
9. **Ակադեմիա** մուտքն ու ելքն իրականացվում է էլեկտրոնային անցագրային համակարգով՝ քարտային գրանցման միջոցով: Անցագրային կարգը սահմանվում է Ակադեմիայի ռեկտորի (**այսուհետ՝ Ռեկտոր**) հրամանով:
10. Աշխատանքային օրն սկսվելուց հետո աշխատանքի չներկայացած, 9<sup>15</sup>-ից ուշ ներկայացած կամ աշխատանքային ժամերին **Աշխատանքի վայրը** լքած **Աշխատողը** պարտավոր է իր անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր բացատրագիր՝ նշելով աշխատանքից բացակայելու պատճառն ու ժամանակահատվածը: **Աշխատողի** անմիջական ղեկավարը նույն օրը բացատրագիրը պարտավոր է ներկայացնել **Աշխատակազմի ղեկավարին**:

### IV. ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

11. Ամենամյա արձակուրդների տրամադրման ժամանակացույցը կազմվում է ընթացիկ տարվա սկզբին՝ **Բաժնի** կողմից, **Աշխատողի** անմիջական ղեկավարի ներկայացրած հայտի հիման վրա՝ հաշվի առնելով **Աշխատողի** ցանկությունը և **Ակադեմիայի** աշխատանքների բնականոն ընթացքն ապահովելու անհրաժեշտությունը:
12. Եթե **Աշխատողը**, անձնական խնդիրներից ելնելով, չի կարող օգտագործել իրեն հասանելիք արձակուրդը ժամանակացույցին համապատասխան, նա, համաձայնեցնելով իր անմիջական ղեկավարի հետ, զեկուցագիր է ներկայացնում **Ռեկտորին**՝ նշելով դրա պատճառը:
13. Արձակուրդ գնալիս, երկարատև գործուղման մեկնելիս կամ այլ պատճառներով բացակայելիս՝ **Աշխատողը** պարտավոր է իր մոտ եղած անավարտ գործերը և այլ փաստաթղթերը հանձնել

իրեն փոխարինողին:

## Վ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ

14. Աշխատանքային պարտականությունների օրինակելի կատարման, աշխատանքի արդյունավետության բարձրացման, շարունակական անբասիր աշխատանքի, աշխատանքում նորամուծությունների կամ այլ ձեռքբերումների կամ գիտահետազոտական կամ հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու հանգամանքով պայմանավորված՝ **Աշխատողների** համար սահմանվում են հետևյալ խրախուսանքի միջոցները.
- 1) շնորհակալության հայտարարում,
  - 2) միանվագ դրամական պարգևատրում,
  - 3) մեդալի հանձնում,
  - 4) պատվոգրի հանձնում,
  - 5) հուշանվերով պարգևատրում,
  - 6) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում,
  - 7) կարգապահական տույժի հանում:
15. Աշխատանքի խրախուսման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են **Ռեկտորի** հրամանով:

## ՎԻ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

16. Աշխատանքային կարգապահության խախտումը՝ **Աշխատողի** կողմից կամ նրա մեղքով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, **Ակադեմիայի** կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով, **Կանոններով**, աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքային պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, վերադասի հանձնարարությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, կարող է հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգապահական տույժերի կիրառման համար:
17. **Աշխատողին** արգելվում է.
- 1) աշխատանքի վայրում աշխատաժամանակի ընթացքում աշխատանքային պայմանագրով չնախատեսված կամ վերադասի հանձնարարությամբ չպայմանավորված գործունեությամբ զբաղվելը.
  - 2) աշխատանքի վայրում ոգելից խմիչք օգտագործած վիճակում գտնվելը.
  - 3) աշխատանքային պարտականությունների կատարման նպատակով տրամադրված, վստահված կամ հանձնված գույքը կամ **Ակադեմիային** պատկանող այլ միջոցները ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը.
  - 4) աշխատանքային անհրաժեշտությամբ չպայմանավորված՝ աշխատաժամանակի ընթացքում այլ ստորաբաժանումներում կամ այլ աշխատողներին հատկացված աշխատա-

տեղերում կամ աշխատատեղ չհանդիսացող տարածքներում անհարկի գտնվելը.

5) **Ակադեմիայի** տարածքում չթույլատրված տեղերում ծխելը:

18. Աշխատանքային կարգապահության խախտման համար **Ռեկտորը** կիրառում է հետևյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն,

2) խիստ նկատողություն,

3) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

19. Կարգապահական վարույթն իրականացվում և կիրառված կարգապահական տույժի մասին **Աշխատողները** տեղեկացվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով:

## VII. ՌԻՆԿՆԴԻՒՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

20. **Ունկնդիրն** իրավունք ունի՝

1) օգտվել **Ակադեմիայի** գրադարանից, լսարաններից, հյուրանոցից (հյուրանոցից և գրադարանից օգտվելու ընթացակարգերը սահմանվում են **Ռեկտորի** հրամաններով).

2) մասնակցել **Ակադեմիայի** գործունեությանն առնչվող հարցերի քննարկմանը և ներկայացնել առաջարկություններ.

3) սահմանված պահանջներին համապատասխան՝ մասնակցել **Ակադեմիայում** անցկացվող գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին, մարզամշակութային միջոցառումներին, թղթակցել «Բանբեր արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսին.

4) ստանալ ուսումնական գործընթացին վերաբերող լիարժեք տեղեկատվություն.

5) ծանոթանալ **Ակադեմիայի**՝ իրեն վերաբերող անհատական և ներքին իրավական ակտերին, բողոքարկել այդ ակտերը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

21. **Ունկնդիրը** պարտավոր է՝

1) կատարել դասախոսների՝ իրենց իրավասության սահմաններում տրված հանձնարարությունները.

2) պահպանել էթիկայի կանոնները.

3) կատարել **Ռեկտորի** և **Աշխատողների** օրինական հրահանգները, ցուցումները, որոշումներն ու հանձնարարությունները.

4) պահպանել **Ակադեմիայի** կանոնադրության, **Կանոնների** և այլ իրավական ակտերի պահանջները:

22. **Ունկնդրի** վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ, իրենց լիազորությունների սահմաններում, հսկողություն են իրականացնում **Ակադեմիայի** կառավարման խորհրդի անդամները, **Ռեկտորը**, **Ակադեմիայի պրոռեկտորը**, **Աշխատակազմի ղեկավարը**, **Ակադեմիայի** հեռաուսուցման և SS դեպարտամենտի ղեկավարը և **Աշխատողները**:

23. **Ունկնդրի** վարքագծի կանոնների 22-րդ կետում նշված անձինք, **Կանոնների** պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելիս, իրավասու են ողջամիտ միջոցներ ձեռնարկել՝ կանխելու այդ կանոնների որևէ կետի խախտումը:
24. **Ունկնդրի** վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ ծանուցումները կարող են կատարվել էլեկտրոնային եղանակով՝ **Ունկնդրի** էլեկտրոնային հասցեին ուղարկելու կամ **Ակադեմիայի** կայքէջում տեղադրելու միջոցով:

#### **VIII. ՌԻՆԿՆԴԻՐՆԵՐԻ՝ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԿԱՐԳԸ**

25. **Ունկնդիրների՝** մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրով նախատեսված լսարանային ուսուցման հատվածի ավարտի պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում **Ակադեմիան** իրականացնում է մասնագիտական պատրաստում անցած **Ունկնդիրների** բացակայությունների հաշվարկ և կազմում բացակայությունների ամփոփ տեղեկանք:
26. Եթե բացակայությունների հաշվարկի արդյունքում պարզվում է, որ դատավորների թեկնածուների հավակնորդների, քննիչների թեկնածուությունների ցուցակում ընդգրկված անձն Ակադեմիայում ուսումնառության ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 5 տոկոսից կամ բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 50 տոկոսից, բացառությամբ՝ տարկետում տրամադրելու դեպքերի, իսկ դատախազների թեկնածուությունների ցուցակում ընդգրկված անձն Ակադեմիայում ուսումնառության ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 20 տոկոսից (ժամանակավոր անաշխատունակության դեպքում՝ առնվազն 50 տոկոսից), և բացակայությունների ամփոփ տեղեկանքը կազմելու պահին բացակայում են Ունկնդրի ժամանակավոր անաշխատունակությունը հիմնավորող կամ բացակայությունը հարգելի համարելու համար անհրաժեշտ և բավարար հիմքերը, Ռեկտորն Ունկնդիրին գրավոր ծանուցում է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կարգապահական վարույթ սկսելու և ծանուցումը ստանալու պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ հիմքեր, հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ:
27. Եթե Կանոնների 26-րդ կետով սահմանված 10-օրյա ժամկետում Ունկնդիրն իր բացակայությունը հարգելի համարելու համար անհրաժեշտ հիմքեր, հիմնավորումներ չի ներկայացնում կամ նշված ժամկետում ներկայացված հիմքերի, հիմնավորումների ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ դատավորների թեկնածուների հավակնորդների, քննիչների թեկնածուությունների ցուցակում ընդգրկված անձն անհարգելի պատճառով բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 5 տոկոսից, իսկ դատախազների թեկնածուությունների ցուցակում ընդգրկված անձը՝ 20 տոկոսից կամ ժամանակավոր անաշխատունակության հետևանքով Ունկնդիրը բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 50 տոկոսից (բացառությամբ տարկետում տրամադրելու դեպքերի), կամ Ռեկտորի կողմից նրա բացակայությունն անհարգելի է

ճանաչվել, Ռեկտորն Ունկնդրի կարգապահական պատասխանատվության հարցը լուծելու համար, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, համապատասխանաբար դիմում է Խորհրդին կամ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովին:

- 27.1 Եթե վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձը (այսուհետ՝ Առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձ) մասնագիտական պատրաստման ընթացքում չի մասնակցել առարկայական կուրսի բոլոր ժամերին, և բացակայությունների ամփոփ տեղեկանքը կազմելու պահին բացակայում են Առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձի բացակայությունը հիմնավորող կամ հարգելի համարելու համար անհրաժեշտ և բավարար հիմքերը, Ռեկտորն Առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձին գրավոր ծանուցում է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կարգապահական վարույթ սկսելու և ծանուցումը ստանալու պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ հիմքեր, հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ:
- 27.2 Եթե Կանոնների 27.1-րդ կետով սահմանված 10-օրյա ժամկետում Առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձն իր բացակայությունը հարգելի համարելու համար անհրաժեշտ հիմքեր, հիմնավորումներ չի ներկայացնում կամ նշված ժամկետում ներկայացված հիմքերի, հիմնավորումների ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ Առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձը անհարգելի պատճառով բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացներից կամ Ռեկտորի կողմից նրա բացակայությունն անհարգելի է ճանաչվել, Ռեկտորն Առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձի կարգապահական պատասխանատվության հարցը լուծելու համար «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով դիմում է Խորհրդին:

## IX. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

28. **Կանոններն** ուժի մեջ են մտնում 2017 թվականի հոկտեմբերի 2-ից:
29. **Կանոնների** գործողության ընթացքում ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտեր ընդունվելու դեպքում **Կանոնների** դրույթները գործում են ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին չհակասող մասով: